

Նախադպրոցական հաստատություններում աշխատողների հնգօրյա վերապատրաստում

Նախադպրոցական հաստատություններում աշխատող դաստիարակներին, երաժշտության դաստիարակներին, մանկավարժներին, վարիչներին, նախադպրոցական այլընտրանքային կրթական ծառայություն իրականացնողներին, նախադպրոցական հաստատություններում աշխատել ցանկացողներին հրավիրում ենք **փետրվարի 19-ից 23-ը՝ ժամը 9.00-15.00**, կրթահամալիրում մասնակցելու 2018թ. ամենամյա վերապատրաստման դասընթացին: Մասնակիցները կձանոթանան հեղինակային կրթական ծրագրով ստեղծված բաց միջավայրին, կրթահամալիրի դպրոց-պարտեզներին, նախադպրոցական խմբերում իրականացվող աշխատանքային նախագծերին, կմասնակցեն երաժշտության, տեխնոլոգիայի, մարզական պարապմունքների:

Մասնակիցների սահմանային թիվը 30-ն է. 31-րդից սկսած՝ հայտերը, հայտատուների համաձայնությամբ, կարող են գրանցվել հաջորդ՝ դասընթացի մասնակիցների ցուցակում:

Կրթահամալիրում մասնակիցները կարող են օգտվել կացարանի, սննդի ծառայություններից:

Մասնակիցներին խնդրում ենք գալ անհատական թվային միջոցով (ներբուք, ներբուք), մարզական՝ մարզահագուստով:

Հասցե՝ Բաֆֆի 57

Հեռախոս՝ 010 74 72 46, 091 43 10 99